

## **Քաղվածք**

### **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից**

**Երևան, 09 հունվար 2019թ.**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2019թ. հունվարի 9-ի նիստում, քննության առնելով դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող Ա. Գ.-ի կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթուղթը, պարզեց, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի հավելվածի 16-րդ ենթակետով առ այն, որ Հանձնաժողովը քննության է առնում ներկայացված փաստաթղթերը և կայացնում համապատասխան որոշում՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մասնակցությունը չթույլատրելու մասին՝ Հանձնաժողովը

### **ՈՐՈՇԵՑ՝**

Ա. Գ.-ին թույլատրել մասնակցել դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին: